Դարույր Սևակ

Կարոտի տարրալուծումը

Ես իմ մթի՜ն-մթի՜ն կարոտն այնպե՛ս գիտեմ,
Ինչպես կույրը գիտի բնակարանն իր հին...
Իմ իսկ շարժումները ես չեմ տեսնում,
Իրերն իրենց տեսքը թաքցընում են ինձնից,
Բայց անսխալ արդեն և անսայթաք
Ես շարժվում եմ այնտեղ,
Ապրում այնտեղ,
Գուցե այն ինքնալար ժամացույցի նման,
Որի սլաքները պոկելուց էլ հետո
Աշխատում է դարձյալ՝ ցույց չտալով
Այլևրս ո՜չ րոպե և ո՛չ էլ ժամ...
Ու ճոճվելով մթան և մենության միջև՝
Ես կարոտն եմ ուզում տարրալուծել
Քիմիկոսի նման, որ հասկանամ
Բնությունը նրա և խորհուրդը խորին:
Իմ ձգտումի վրա, ջանքիս վրա
Հեռվից քրքջում է ջուրը ջրհորդանի՝
Անասելի՛ հեռվից,
Անլսելի՜ հեռվից:
Մի քաղքենի թռչուն հեղուկ գեղգեղանքով
Իր խեղճ գոյությունն է երգ դարձընում անբառ՝

Անլսելի՛ հեռվից,
Անորսալի՛ հեռվից:
Բառերն սկսում են անձս վիրավորել,
Որովհետև նրանք ինձ են արձագանքում
Անորսալի՛ հեռվից,
Աններելի՛ հեռվից:
Պատից պատ եմ քայլում, և քայլերիս
Ձայնը թվում է, թե շատ է հեռվից գալիս,
Աններելի՛ հեռվից,
Անկարելի՛ հեռվից:
Թեպետ կույր չեմ բնավ,
Սակայն շուրջս նայում
Ու չեմ տեսնում ոչի՛նչ,
Որովհետև
Հաճախ մեր աչքերը ջոկվու՛մ - պոկվու՛մ մեզնից
Ու գնալո՛վ գնում և հասնում են այնտե՛ղ,
Որտեղից մենք հիմա շա՛տ ենք հեռու,
Անկարելի՛ հեռու,
Անհնարի՛ն հեռու:
Մենք ինքներըս վազում մեր հետևից
Ու չե՛նք կարողանում ինքներըս մեզ հասնել:
Ու չե՛նք կարողանում ինքներըս մեզ հասնել...
Եվ հենց դա՞ չէ արդյոք, որ կոչվում է կարոտ...

04,05.II.1964թ.
Երևան